





նուց Միութիւնը առաջին հայ երկսեռ Բնիկ-  
 բուծիւնն է, որուն ոչ միայն անդամները,  
 այլ եւ վարչական կազմն ալ երկսեռ է:  
 Էսայեան Սանուց Միութիւնը 1912ին հրա-  
 տարակած իր զբօսընդին մէջ<sup>98</sup> կը շեշտէ  
 Միութեան այս առաջնութիւնը: Հոն տրուած  
 է Միութեան հնգապատիկ նպատակը.  
 Ա. Էսայեան վարժարանի նախկին սաներուն  
 միջև բարոյական կապ հաստատել՝ դուժա-  
 րելով ժողովներ եւ հանդէսներ. Բ. Էսայեան  
 վարժարանի աշակերտներուն մտաւորական  
 զարգացումին նպաստել՝ սարքելով Դասա-  
 խօսութիւններ, հիմնելով Մատենադարան ու  
 Թանգարան եւ յաջողակ աշակերտներն ալ  
 վարձատրելով Մրցանակով. Գ. Էսայեան  
 վարժարանի կրթական ու բարոյական մա-  
 կարգակին հոգածու դռնուել... Դ. Էսայեան  
 վարժարանի կարօտ աշակերտներուն օգնել.  
 Ե. Առհասարակ չքաւոր մանուկներու դաս-  
 տիարակութեան մղում տալ<sup>99</sup>:

Միութեան անդամավճարն է ամսական  
 100 փարա: Վարչութիւնը կը բաղկանայ  
 Ընդհանուր ժողովէ, Վարչական Խորհուրդէ  
 եւ Օժանդակ Մասնախումբերէ: Միութիւնը  
 իր առաջին տարիէն սկսած ձգտած է հասնել  
 իր նպատակին: Էսայեան վարժարանի 150  
 երկսեռ աշակերտներու ձրի դասադիրք եւ  
 գրենական հայթայթած է, սարքած է ցերե-  
 կոյթներ ու բանախօսութիւններ, որդեգրած  
 է որք մը Առանայէն՝ հոգալով անոր ամէն  
 պիտոյքը, հիմնած է Մատենադարան՝ աւելի  
 քան 1200 հատորով եւ վերջապէս կազմելով  
 Օժանդակ Միութիւն մը՝ «Էսայեան Սանուց  
 Օժանդակ Միութիւն» անունով, կազմուած՝  
 Էսայեան վարժարանի աշակերտուհիներէն,  
 նպատակ ունենալով օգնել Միութեան ձեռ-  
 նարկներուն եւ իրենք իրենց<sup>100</sup>:

Էսայեան Սանուց Միութիւնը 1913ին ալ  
 կը կազմէ Մարմնամարզական Միութիւն մը  
 (Մարմնամարզ, Կ. Պ. 1913, էջ 59):

Էսայեան Սանուց Միութիւնը Ա. եւ Բ.  
 Համաշխարհային պատերազմներէ վերջ՝  
 1947ին կը վերակազմուի, 1951ին կ'ունենայ  
 540 անդամ: Իր ներկայ նպատակն ու  
 գործունէութեան ասպարէզը կը կազմեն.  
 1. Մշակութ. շարժում, 2. Ընկերային օժան-

<sup>98</sup> Բառամեակ Էսայեան Սանուց Միութեան 1908—  
 1912. Կ. Պ. 1912, էջ 7—8:  
<sup>99</sup> Անդ. էջ 5:  
<sup>100</sup> Անդ. էջ 23:

դակութիւն, 3. Միութեան նուագախումբի  
 գործունէութիւն<sup>101</sup>:

52. ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՅ  
 ՄԻՈՒԹԻՒՆ (1908)

«Մուրատ-Ռափայէլեան Նախկին աշա-  
 կերաց Ընկերութեան» լուծուելէ վերջ՝ կը  
 մնար այրող փափազ մը դայն վերակենդա-  
 նացած տեսնելու: 1908ի Սահմանադրու-  
 թիւնը կ'ընծայէր պատեհ առիթը: 1908 Սեպ-  
 տեմբերին կը կազմուի նախ «Նախաձեռնարկ  
 Առժամեայ Մասնախումբ» մը: Զանազան  
 խորհրդածութիւններէ յետոյ՝ 1908 Նոյ. 29ին  
 Բերայի Միութեան վարժարանի մէջ գու-  
 մարուած Ընդհ. ժողովով կը հիմնուի «Մու-  
 րատ-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց  
 Միութիւն»ը, որուն անդրանիկ Տնօրէն Ժո-  
 ղովի վարչութեան կազմը կ'ըլլայ հետե-  
 ւեայը.

Արամ Յ. Երամ (Ծերակու- տական)	Ատենապետ
Յակոբ Փափուգեան	Դեր-Ատենապետ
Պօղոս Միմիտեան	Ատենադպիր
Յովսէփ Տէտէպալ	Գանձապետ
Յովսէփ Փափուգեան	Հաշուակալ
Մկրտիչ Աճէմեան	Խորհրդական
Յովհաննէս Խորասանձեան	"
Յովսէփ Կիւմիւշեան	"
Գամէր Սուրէնեան	"

Միութեան Կանոնադրի 18 Յօդուածնե-  
 րէն Բ. ը կ'ըսէ. «Միութեան նպատակն է եղ-  
 րայրակցական յարաբերութիւն մը դոյսոյ-  
 նել Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակեր-  
 տաց մէջ, աջակցելով իրարու նիւթապէս եւ  
 բարոյապէս եւ այս նպատակաւ հաստատել  
 Ընթերցարան-Լսարան մը Միութեան ան-  
 դամներուն յատուկ» (տե՛ս Ամսօրեայ Տեղի-  
 կատու, Կ. Պ. 1909, Թ. 1, էջ 1—8, 38—39:  
 — Բազմավեպ, 1908, էջ 574—576):

Միութեան կենդրոնն էր Պոլիս, բայց  
 անդամակցութիւն կ'ընդունէր նաեւ գրսէն,  
 բաւական որ վենետիկի Միութեանց նախ-  
 կին աշակերտներ եղած ըլլային: 1909 Մայի-  
 սին Միութիւնը ունէր աւելի քան 100 ան-  
 դամ, որոնց մէջ պետական բարձրատիճան  
 անձեր ալ, ինչպէս՝ Յովհ. Փաշա Սազըզ,  
 Անտոն Փաշա Նաֆիլէ, Արամ Յ. Երամ՝ Ծե-  
 րակուտական, եւն:

<sup>101</sup> Մարմարա, Կ. Պ. 1951, Թ. 2767: — Այսօր,  
 Պարիս 1952, Թ. 319:

Միութիւնը ունեցած է իր յատուկ թերթը  
 «Ամսօրեայ Տեղեկատու» անունով, որ հրա-  
 տարակուած է Կ. Պ. 1909 Մայիսէն մինչեւ  
 1914 Դեկտեմբեր: 1930ին թերթը կը վեր-  
 հրատարակուի «Տեղեկատու Մուրատ-Ռա-  
 փայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան»  
 անունով, որուն խմբագրութեան կենդրոնը  
 կ'ըլլայ սակայն Պարիս-Սեւրը եւ կը տեւէ  
 մինչեւ 1932 Յունիս. հոս է որ վերակազ-  
 մուած է նաեւ Միութիւնը՝ Ա. Համաշխար-  
 հային պատերազմէ վերջ: Պարիսի Մուրա-  
 տեան վարժարանի մէջ Միութիւնը կը յա-  
 ջողի, 1931ին, Պէշկիթաշեանի անունով, ուր  
 բուած թատերասրահ մը կառուցանել, ուր  
 կը կազմուի նաեւ Միութեան «Կիլիկիա»  
 երգչախումբը՝ զեկավար ունենալով տաղան-  
 դաւոր, վաղամեռիկ Գուրգէն Ալէմշահը  
 (Տեղեկատու, 1932, Թ. 13):

Անկախ վերոյիշեալ Միութեանէն՝ 1926ին  
 Միւրանի մէջ կը կազմուի «Մուրատ-Ռափա-  
 յէլեան նախկին Սանուց Միութիւն» մը՝  
 գլխաւորութեամբ Միքայէլ Ալէմշահի: Այս  
 վերջինը 1931 Մարտին կը հրատարակէ  
 «Մուրատ-Ռափայէլ» անունով Պարբերա-  
 թերթ մը, որուն մէջ կը կարգանք Միւրանի  
 եւ Պարիսի «Միութիւն»ներու միացման փոր-  
 ձերու մասին գրուած նամակները՝ 1929—  
 1930ի ընթացքին: Երկու Միութիւններու  
 ձուլումը չէ յաջողած (տե՛ս Մուրատ-Ռա-  
 փայէլ, Միւրան, 1931, էջ 16—31):

Միւրանի «Սանուց»ը 1931ին ունէր 46 ան-  
 դամ:

53. ԷՆՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1909)  
 1908ի վերջերը խումբ մը բժշկական ուսա-  
 նողներ, ինչպէս՝ Սուրեան, Տիրատուրեան,  
 Անդրէ Վահրամ, բժշկական Միութիւն մը  
 կը կազմեն, որուն անունը կը կնքէ Դոկտ.  
 Վ. Թորգոմեան՝ կոչելով զայն ԺԲ. դարու  
 Հայ նշանաւոր բժիշկ՝ Միսիքար Հեքիմի ա-  
 նունով՝ Հեքիմի Բժշկական Միութիւն: Այս  
 Միութիւնը կը հաստատուի 1909 Յու-  
 նուար 1ին եւ կը տեւէ մինչեւ 1910ի սկիզբը  
 (Տեղեկագիր Հայ Բժշկական Միութեան,  
 Կ. Պ. 1921, էջ 16—17):

53ա. ԱՇՏԱՏԱՆԻՔԻ ՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1909)  
 Անունը արդէն կը բնորոշէ իր խկու-  
 թիւնը: Հիմնուած է 1909ին: Տեւած մինչեւ  
 1914:

54. ՀԱՅ ՏՐԱՄԱԹԻՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1910)  
 Բերայի «Հայ Տրամաթիք Ընկերութիւն»ը  
 կազմուած է 1910ի ձմեռնամուտին (Թէո-  
 դիկ, Ամէնուն Տարեց., 1921, էջ 277—278):  
 1912ին առժամանակեայ կերպով վերակազ-  
 մուելէ վերջ (Անդ. էջ 278) կը քայքայուի:  
 Իսկ 1919ի Յունուարին վերջնականապէս կը  
 վերակազմուի (Անդ. էջ 278, 280, 308):

55. ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1911)  
 Արդէն 1911ի ընթացքին ջանքեր եղած  
 էին Հայ Բժշկական Միութեան հիմնումին  
 համար, սակայն 1912 Մայիս 28ի պետական  
 արտօնութեամբ է որ վերջնականապէս կազ-  
 մուած է Միութիւնը<sup>102</sup>: Հիմնադիր անդամ-  
 ները 20 պոլսահայ բժիշկներ են, որոնց ա-  
 նուան ցանկը աւելորդ չենք համարել հոս  
 եւս տալ մականունի կարգով. Աճէմեան Տիգ-  
 րան, Արզումանեան Մկրտիչ, Դաւիթեան  
 Գրիգոր, Եղոյանեան Կարապետ, Չարֆ-  
 ձեան Գէորդ, Չօհրայ Գէորդ, Էլմասեան  
 Յակոբ, Էքմէքձեան Յակոբ, Թորգոմեան  
 Վահրամ, Խանձեան Կարապետ, Մալխասեան  
 Լեւոն, Մատթէոսեան Հայկ Պարոնիկ, Մի-  
 միտեան Անտոն, Չիլիկիւրեան Բեթթակ, Պա-  
 պայեան Տիգրան, Պօղոսեան Խաչատուր,  
 սերթեան Սարգիս, Տաղաւարեան Նազա-  
 րէթ, Տատուր Յակոբ, Քրիսեան Ճանիկ<sup>103</sup>:

Միութեան նպատակն է. «Զբաղիլ բժշ-  
 կական ընդհանուր հարցերու ուսումնասի-  
 րութիւններով: Հայ բժշկական դասին մէջ  
 բուրձնաբերութեան ու եղբայրակցութեան գո-  
 րաւոր զգացումներ վառ պահել եւ ի հարկին  
 պաշտպանել անոր բարոյական եւ նիւթական  
 իրաւունքները: Հարկ տեսնուած պարա-  
 զային՝ դիտական թանգակութիւն բերել՝  
 ազգային կրթական ու բարեկրթական հաս-  
 տատութիւններու<sup>104</sup>: Իր Կանոնադիրը ունի  
 32 Յօդուած՝ հրատարակուած 1912ին: Ան-  
 դամները մուտքի համար 108, իսկ տարեկան  
 բաժնի համար 54 դրուշ կը վճարեն:

1912—1913ի շրջանին Միութեան վար-  
 չական կազմը հետեւեալն է.  
 Դոկտ. Հ. Պ. Մատթէո-  
 սեան Ատենապետ  
 Դոկտ. Վ. Յ. Թորգոմեան Դեր-Ատենապետ

<sup>102</sup> Տե՛ս Տեղեկագիր Հայ Բժշկական Միութեան,  
 Կ. Պ. 1913, էջ 5—9:  
<sup>103</sup> Հայ Բժշկական Միութիւն, Կ. Պ. 1912, էջ 2:  
<sup>104</sup> Անդ. էջ 3:

Դոկտ. Գ. Դաւթեան Ատենադպիր  
 Դոկտ. Ս. Սէրժեան Դեր-Ատենադպիր  
 Դոկտ. Բ. Զիլինկիրեան Գանձապետ  
 Դոկտ. Յ. Էքմէճեան Գրապահ

Միութիւնը մինչեւ 1922 պահած էր իր գոյութիւնը:

55ա. ՀԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1912)

1911ի վերջերս կամ 1912ին սկիզբը հիմնուած է թրքահայ Հրատարակչական Ընկերութիւն (տե՛ս Ժամանակ, Կ. Պ. 1912, թիւ 1059, 1134, 1190):

55բ. ԶԲՕՍԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1912)

Բերայի Ընկերութիւնն առաջին անգամ կը յիշուի 1912ին (Ժամանակ, 1912, թ. 1140):

56. «ՆԱԻԱՍԱՐԳ» ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1913)

Հիմնուած է 1913ին Դանիէլ Վարուժանի ձեռքով եւ վերակազմուած՝ 1918ին: Ահա իր նպատակը. «Արթնցնել եւ արծարծել հայ երիտասարդութեան մտային թագուն կարողութիւնները, քաջալերել զանոնք եւ մղուած ապա անոնց զարգացման»<sup>105</sup>:

1920ին Միութիւնը ունէր 35 անդամ: Վարչական Խորհուրդը կազմուած էր հետեւեալներէ. Արամ Յ. Ազնաւուր (Ատենապետ), Յ. Յրէնկեան, Օր. Մ. Պարոնեան, Ա. Եղիկեան, Հ. Տանտիեան, Թ. Չատիկեան, Ս. Միսեան<sup>106</sup>:

57. «ԱՐՈՒԵՍԱՍԷՐ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Միութիւնն հիմնուած է 1918 Դեկտեմբերին: Նպատակը կը լինէր. «Գեղարուեստի եւ մասնաւորապէս երաժշտութեան ճաշակը ներմուծել հայ երիտասարդութեան մէջ»: Ունէր 40 անդամ եւ նուազախումբ մը 20 հոգի ունեցող, ղեկավարութեամբ «Մաէսթրօ» Յ. Սիւննեանի: Վարչական Խորհուրդը կը կազմէին. Կարապետ Ալիքսանեան (Ատենապետ), Ա. Պարիսեան, Հ. Քիւրքեան, Մ. Քիւրքեան, Ա. Քէլպապեան, Լ. Հազարապետեան եւ Ն. Թէքէճեան<sup>107</sup>:

<sup>105</sup> Թէոդէի, Առէնուն Տ. 1921, էջ 303:  
<sup>106</sup> Անդ:  
<sup>107</sup> Թէոդէի, Առէնուն Տարեցոյցը, 1921, էջ 301:

58. «ԱՏՐՈՒՇԱՆ» ԳՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

1918 Դեկտ. 29ին հիմնուած է Բերայի «Ատրուշան»ը՝ նպատակ ունենալով. «Տարածել գրականութիւնն ու գեղարուեստը»: Ունէր 25 անդամ: Վարչութիւնը կը կազմէին. Վահրամ Սեւունի (Ատենապետ), Յ. Սարուխան, Պ. Սարունի, Օր. Հ. Գալֆայեան<sup>108</sup>:

58ա. ՈՐԲԱՀԱՒԱՔ ՄԱՐՄԻՆ (1918)

Նոյնանուն Միութիւններ կազմուեցան պատերազմի դադարին՝ զանազան թաղեր (տե՛ս Բերայինը՝ Ժամանակ, 1918, թ. 3372):

59. ՀԱՅ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Հիմնուած 27 Յունիս 1919ին՝ ունենալով նպատակ. «Առանց դասակարգային, յարաբերական եւ կուսակցական խտրութեանց՝ բոլոր Միութիւններն ի մի հաւաքելով, գործունէութեան մղել զանոնք՝ ազգային հրատապ անհրաժեշտութեանց առջեւ»: Անդամակցած են 30 Հայ Միութիւններ: Իր Վարչական Խորհուրդը. Ա. Մակարեան (Ատենապետ), Պ. Չարգարեան, Կ. Թարխանեան, Յ. Սարուխան, Դոկտ. Հ. Գուրապեան, Գ. Աթթարեան եւ Շ. Թաշճեան: Մայր Դիւանը կը կազմէին. Յովհ. Աճէմեան, Ս. Ճէնապեան եւ Ս. Սարգիսեան<sup>109</sup>:

60. «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Հիմնուած է 1919 Փետր. 28ին: Իր նպատակն էր. «Սատարել Հայաստանի վերաշինութեան, պատրաստելով հողագործ եւն, մասնագէտներ»: Ունեցած է 220 անդամ: Վարչական Մարմինը կը կազմէին. Կարապետ Նուրեան (Ատենապետ), Հ. Տանցիկեան, Ս. Ստեփանեան, Թ. Սուքիասեան, Պ. Արան, Ս. Քիւրքեան, Յ. Էքմէճեան<sup>110</sup>:

61. «ԱՍՏՂԻԿ» ՄԻՈՒԹԻՒՆ (1918—1919)

Կը յիշուի Բերայի մէջ, զինազարգէն վերջ կազմուած Միութիւններու կարգին եւ կ'ըսուի թէ Բերայի «Ատրուշան»ը 1920 Սեպտ. 20էն ի վեր որեւէ կապ չունի «Ատ-

<sup>108</sup> Անդ. էջ 300:  
<sup>109</sup> Անդ. էջ 300:  
<sup>110</sup> Անդ. էջ 301:

ղիկ»ի հետ<sup>111</sup>, ուրեմն՝ 1920 Սեպտ. 20էն առաջ գոյութիւն ունէր «Ատրուշան»:

62. «ԴՊՐՈՑԱՍԷՐ» ՕԺԱՆԳԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ (1913)

1879ի «Դպրոցատէր Տիկնանց Ընկերութեան» նպատակը համար կազմուած է այս «Օժանգակ»ը, 1913ի սկիզբը:<sup>112</sup>

63. «ԿԱՅԾ» ՄԻՈՒԹԻՒՆ (1920)

Կը յիշուի 1921ին, Պիմէն Չարգարեանին, առանց որեւէ մանրամասնութեան<sup>113</sup>:

64. ՀԱՅ ԱԿՈՒՄԲ (1919?)

Հայ Միութիւններու կարգին յիշուած է 1920ին<sup>114</sup>:

65. ՀԱՅ ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1912)

1912ին անգամ մըն ալ փորձուած է կազմել այս Ընկերութիւնը, որ ա՛յնքան կարեւոր դեր կրնար խաղալ Պոլսոյ պէս զպոլսոյնէրով հարուստ միջավայրի մը մէջ (Ժամանակ, Կ. Պ. 1913, թ. 1351): Դժբախտաբար տեղեկատուն դո՛ճ կ'ըլլած է լոկ Ընկերութեան անունը յիշելով<sup>115</sup>:

66. ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1919—1921)

Հաւանօրէն կազմուած է զինազարգէն վերջ: 1922ին ունէր 40 անդամ՝ հետեւեալ Վարչական կազմով. Հ. Եազմաճեան, Ս. Բարսեղեան, Ս. Ամատունի, Շ. Արվազեան, Վ. Միսասեան, Յ. Եօրտամեան եւ Ս. Գալուստեան<sup>116</sup>:

67. ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՅ ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (1919)

Ինչպէս ուրիշ շատ մը Ընկերութիւններու՝ նոյնպէս ասոր անունը անգամ ամբողջական չէ տրուած Պիմէն Չարգարեանի կազմած ցանկին մէջ, որով չենք զիտեր թէ թէոդէիի քով<sup>117</sup> յիշուածը Ընկերութիւն թէ Միութիւն է: Նկատի առնելով որ 1908էն Վերջ կազմուածները մեծ մասով «Միութիւն» կոչուած են՝ անձանթ այս Ընկերութիւնները «Միութիւն» կոչեցինք:

<sup>111</sup> Անդ. էջ 300, 308:  
<sup>112</sup> Ժամանակ, Կ. Պ. 1913, թ. 1432:  
<sup>113</sup> Թէոդէի, Անդ. էջ 308:  
<sup>114</sup> Անդ. էջ 308:  
<sup>115</sup> Անդ:  
<sup>116</sup> Թէոդէի, Անդ. Տ. 1922, էջ 371:  
<sup>117</sup> Անդ. 1921, էջ 308:

68. «ՏԱԻՐՈՍ» ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ (1919?)

Յիշուած պարզ անունով, սապէս. «Տաւրոս կանանց»<sup>118</sup>:

69. ՀԱՅ ՏԻԿԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (1920)

1918էն առաջ չենք հանդիպած Բերայի Հայ Տիկնանց Ընկերակցութեան յիշատակութեան: Թորգոմեան (Երեմիա Չէլչպիլի եւն, Բ., էջ 562—563) զայն 1918էն վերջ յիշելով՝ կ'ըսէ թէ չնորհիւ Տիկնանց Ընկերութեան՝ Բերայի աղջկանց Արհեստանոցը 1920ին փայլուն վիճակ ունէր:

70. ՀԱՅ ԱՐՈՒԵՍԻ ՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1918—1920)

Կը յիշուի Թորգոմեանէ (Երեմիա Չէլչպիլի եւն, Բ., էջ 563): Ընկերութեան ժողովները Բերայի Արհեստանոցի չէնքին մէջ տեղի կ'ունենային:

71. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1929?)

«Եկեղեցական Երաժշտասիրաց Միութեան» կենդանական խումբը երկար ատեն գործած է Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ մէջ՝ գպրապետութեամբ Մկրտիչ Իւթիւճեանի եւ ղեկավարութեամբ Ներսէս Խիտապէտեանի, որուն կ'անդամակցին նաեւ Սամաթիոյ Դպրաց Դասի անդամներէն Հայկատէր Նշանեան, Միքայէլ Թուրլուճեան, Նուպար Իւթիւճեան, Շամիրամ Ճիգմէճեան, որոնց մասնակցութեամբ ու գործակցութեամբ հրատարակուած են պատարագի հարգատ երգեցողութիւնները, պատիւ բերելով մեր ազգային եկեղեցական կազմակերպութեանց: Միութեան մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: Հիմնումի թուականի մասին մտաւոր կուսան մըն է Ներսէս Խիտապէտեանի կողմէ Բերայի Դպրաց Դասի կազմութիւնը 1929ին, ինչպէս տեսանք նախապէս: Կարապետեան<sup>119</sup> Միութեան գործունէութեան շրջանի մասին ակնարկելով՝ սա անորոշ բացատրութիւնը գործածած է (1935էն առաջ) «Քանի տարիներէ ի վեր»:

<sup>118</sup> Անդ. էջ 308:  
<sup>119</sup> Պեւոստ Կարապետեան, Հնդադարեան Յիշատակարան, անդ. էջ 312:

ՖԵՐԻՊԻԻՂ (ԲԵՐԱ)

1. ՏԱՃԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1862)

Երբևն Բերայի վերաբերող Ֆերիզիւզ ունեցած է Տաճատեան Ընկերութիւն մը, որ ըստ Փուլջի<sup>1</sup> հիմնուած է 1862 Յունիս 26ին, իսկ ըստ Մախի<sup>2</sup> 1862 Ապրիլ 22ին:

Ընկերութեան սկզբնական նպատակներէն մին եղած է «Ընկերութեան ունեցած պատրաստ դրամին մէկ երրորդ մասը» Ֆերիզիւզի եկեղեցւոյն նուիրել<sup>3</sup>: Ընկերութիւնը 1864ին Ֆերիզիւզի Ս. Վարդանանց եկեղեցիին համար խաչկալ մը շինել կու տայ<sup>4</sup>:

Մախի համեմատ<sup>5</sup> Ընկերութեան նպատակն է, 1866ին, «Ֆերի գիւղի մէջ Ազգային դպրոց մը կառուցանել»: Ընկերութեան այս նպատակին հասնելու համար՝ 1866 Փետրուար 1ին Արեւելեան Թատրոնի մէջ մասնաւոր ներկայացում մը կը տրուի ի նպաստ Ընկերութեան: Կը ներկայացուին. «Նախերգանք մը», «Մանդուխտ» ողբերգութիւնը եւ «Դագազ ու Խազ» գաւեշտը<sup>6</sup>:

Զեփիւռ<sup>7</sup> կը դիտէ որ Ընկերութիւնը իր մէկ տարեկանին արդէն կիսամեա խոնջած է: Կերեւայ թէ այդ է պատճառը որ 1863ին հարկ տեսնուած է Ընկերութեան կանոններուն մէջ փոփոխութիւն մտցնել: 1863 Մարտ 12ին Ընկերութեան Ընդհ. Ժողովը կը գումարուի Գումդափուի Դրսի դպրոցը. նախագահն է Պետրոս Ծ. վարդապետ, իսկ Ատենապետը՝ Տիգրան Գափումաճեան: Այս անթիւ հիմնական կանոնադրութեան մէջ սա փոփոխութիւնները կ'ըլլան. տարեկան 50 դրուշի տուրքը 30ի կ'իջեցուի, վեցամսեայ համարատուութիւնը տարեկանի կը փոխուի եւ Ընդհ. Ժողովի գումարման համար բաւական կը համարուի 40է աւելի անդամի ներկայութիւնը<sup>8</sup>:

Ընկերութիւնը սովորութիւն ունի իր տարեկարճի օրը հանդիսական պատարագ մատուցանել տալու եւ դաշտագնացութիւն կամ նուագերգութիւն ու ճաշկերոյթ սարքելու<sup>9</sup>:

1869 Հոկտ. 2ին Փոքր-Մախի<sup>10</sup> կը ծանուցանէ որ Ընկերութեան Ընդհ. Ժողովէն ընտրուած Յանձնաժողովը Ընկերութեան Կանոնադրութիւնը խմբագրած է: Ընկերութեան նոր կանոնադրութիւն մ'ունենալը Մեծ-Մախի ալ կը ծանուցանէ նոյն տարին, բայց երկու տարի վերջ միայն կը հրատարակէ զայն<sup>11</sup>:

Ընկերութեան այս նոր կանոնադրութիւնը 17 Յօդուածէ բաղկացած է, որոնց առաջինը կ'ըսէ. «Ընկերութեան նպատակն է Ֆերիզի-գիւղի մէջ Լուսաւորչական գիշերօթիկ դպրոց մը հաստատել եւ անոր պիտոյքը հոգալ ու մատակարարել»:

Ընկերութիւնը իր նպատակին հասնելու համար պայմանաժամ որոշած է, այն է՝ 35 տարի. 1871 Հոկտ. 1էն մինչեւ 1906 Սեպտ. 31: Այդ ժամանակը լրանալուն պէս՝ պիտի սկսի գործադրել իր նպատակը՝ բանալով դպրոցը: Ընկերութիւնը 1871ին ունէր 250 օսմ. ոսկի դրամագլուխ մը՝ արժէթուղթի վերածուած: Իր կանոնադրութեան վերջին Յօդուածին համեմատ՝ Ընկերութեան կանոններն անփոփոխելի են:

Զենք դիտեր թէ Տաճատեան Ընկերութիւնը իր նպատակին հասնող է: Իր անունով վարժարան մը, որքան գիտենք, չկայ Ֆերիզիւզի մէջ: Հոն կայ Մէրամէթճեան վարժարանը՝ կառուցուած Զենոր Պէյ Մէրամէթճեանէ, 1912ին<sup>12</sup>:

Ընկերութեան մասին Օրագիր կ'արձագանգէ 1873ին, գրելով. «Ի դիմաց Տաճատեան Ընկերութեան Ատենապետ Կարապետ Գ. Ազարթամաճեան եւ Ատենապետ Եղիազար Մ. Մէլիքեան Ընկերութեան անդամները ընդհանուր ժողովի կը հրաւիրեն Եէնի-գափուի վարժարանը<sup>13</sup>»:

Իսկ Մախի (1875, Թ. 1689) կ'իմացնէ թէ Ընկերութեան ունեցած պատրաստ գոյքն է 39 բաժնետոմս, որոնցմէ 9ը Բուճէլի Երկաթուղիներու: Ասոնք կ'արժեն 450—500 ոսկի եւ մասնաւորապէս արդիւնքն են Ընկերութեան գործօն անդամին՝ Համբարձում Մազպուլեանի (անդ՝ Թ. 1691):

<sup>10</sup> 1869, Թ. 431:  
<sup>11</sup> Տե՛ս Մախի, 1871, Թ. 1131:  
<sup>12</sup> Մարտ. Հանդէսեան, անդ՝ էջ 327:  
<sup>13</sup> Օրագիր, 1873, Թ. 919:

<sup>1</sup> Կ. Պ. 1866, Թ. 127:  
<sup>2</sup> 1871, Թ. 1130:  
<sup>3</sup> Պեգասեան Թռչնիկ, Կ. Պ. 1863, Թ. 10, էջ 78:  
<sup>4</sup> Մարտ. Հանդէսեան, անդ՝ էջ 327:  
<sup>5</sup> 1866, Թ. 725:  
<sup>6</sup> Անդ:  
<sup>7</sup> Կ. Պ. 1863, էջ 97:  
<sup>8</sup> Պեգասեան Թռչնիկ, անդ:  
<sup>9</sup> Մախի, 1864, Թ. 646: — Մէքմ. Հալ., 1865, Թ. 606:

2. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ — ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872 ?)

Ֆերիզիւզ ունեցած է նաեւ «Ս. Վարդանաց Ընկերութիւն» մը, որուն ծագումը յայտնի չէ: Մախի<sup>14</sup> կարճ ծանուցում մը հրատարակելով՝ Ընկերութեան մասին յետագայ հակիրճ տեղեկութիւնը կու տայ.

«Ֆերիզիւզի «Ս. Վարդանաց» Ընկերութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ իւր անունը «Ուսումնասիրաց»ի փոխելու «հարկն զգացած է»: Հետեւապէս իւր նախկին տոմսակցին ու կնիքն յիշեալ անունով վերածուած են»:

Մախի այս ծանուցումէն կը տեսնուի որ Ընկերութիւնը ոչ միայն նոր կազմուած չէ, այլ եւ ենթադրել կու տայ թէ ան գոյութեան անցեալ շրջան մը ունեցած է իր ետեւը. կ'ըսուի՝ «Իւր նախկին տոմսակցին ու կնիքն»:

Ֆերիզիւզ արդէն 1859ին «Վարդանանց» անունով եկեղեցիի մը հիմը դրած է, աւարտելով զայն 1861ին<sup>15</sup>: Իսկ 1872ին ունէր դարձեալ «Վարդանանց» անունով դպրոց մը<sup>16</sup>: Արդ, հաւանական չէ՞ ենթադրել որ արդէն այդ տեսններէն Ֆերիզիւզի Հայութիւնը ունեցած է նաեւ «Վարդանանց Ընկերութիւն» մը:

Ընկերութեան անունը «Ուսումնասիրաց» ձեւով միայն ծանօթ է Ալոյցճեանի (Գաղ. Տար., Գ., էջ 121) եւ կը գնէ 1883ին:

3. ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1913)

Ֆերիզիւզի եւ Միացեալ Թաղերու (Շիշլի, Նշան-Թաշ, Վերին-Նախկալթի) Հայ Ընկերութիւնը 1913ին կը հիմնէ կրթասիրաց ընկերութիւնը՝ ժողովուրդին կրթութեան եւ վարժարաններուն նպաստելու համար (Ժամանակ, 1913, Թ. 1635):

ԲԱՆԿԱԼԹԻ (ԲԵՐԱ)

1. ԱՂԱՍԱՍԵՐ ԵՂԱՅՐՈՒԹԻՒՆ (1872)

Հայ Կաթողիկէ Ընկերութիւն մ'է Աղբաւ տասէր Եղբայրութիւնը հաստատուած 1872 Սեպտեմբերին, ինչպէս կը ծանուցանէ Մախի<sup>17</sup> կատակարարուն բառերով: Ընկերու-

<sup>14</sup> 1882, Թ. 3106:  
<sup>15</sup> Մարտ. Հանդէսեան, անդ՝ էջ 326:  
<sup>16</sup> Ախա, Կ. Պ. 1872, էջ 64:  
<sup>17</sup> Կ. Պ. 1872, Թ. 234, էջ 221:

թեան նպատակը եղած կ'երեւայ Ս. Յակոբի աղբատներու խնամատարութիւնը:

2. ՎԻՆԵՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԱՐԵԱՆՅ Կ. ՊՈԼՍՈՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1884)

1884էն առաջ «մի քանի տարիէ հետէ» փակուած Վիեննայի Միթիթարեանց Բանկայթիլի գիշերօթիկ վարժարանը 1884ի Սեպտեմբերին կը վերաբացուի ձեռնտուութեամբ Հայ Կաթողիկէ Համայնքի Կաթողիկոս-Պատրիարք Ազարեանի եւ Հայ Կաթ. աղանաւոր անձերու<sup>18</sup>: Արեւելք կ'իմացնէ միեւնոյն տեսն թէ «Վարժարանին նախկին աշակերտներէն 40 անձինք եւս Ընկերութիւն մը կազմած են, ամեն տարի նուագահանդէս մը տալու համար ի նպաստ այն կրթական հաստատութեան<sup>19</sup>»:

Դժբախտարար շունինք մեր ձեռքը Ընկերութեան Ծրագիր-Կանոնագիրը, որ անշուշտ գոյութիւն ունեցած ըլլալու է: Որքան կ'երեւայ սակայն Ընկերութիւնը հիմնական կազմակերպութիւն մը չէ ունեցած եւ կարճ ժամանակէն մարած է: Ասիկա անկէ յայտնի կ'ըլլայ որ 1887 Դեկտեմբերին վարժարանի նախկին աշակերտները «Վարժարանի հոգարարութեանէն ի վաղուց անտի բաղձացուած Ընկերակցութեան մը կազմակերպութեան կը փութան»<sup>20</sup> եւ նոյն ամսոյ 6ին հիմ կը գնեն «Ընկերութեան նախկին աշակերտաց Կ. Պոլսոյ Վիեննական Միթիթարեան վարժարանի»<sup>21</sup>:

Ուրեմն երկրորդ անգամ կը կազմուի վիեննական վարժարանի նախկին աշակերտաց Ընկերութիւնը, հաւանօրէն միեւնոյն յորջորջումով:

1887ի Ընկերութիւնը ունի իր «Կանոնագիր»ը, ինչպէս տեսանք, հրատարակուած 1888ին եւ որ կազմուած է 25 կէտերէ, որմէ կ'իմանանք թէ Ընկերութեան նպատակն է. «Ա. Աշակերտներուն իրարու սէրն ու բարեկամութիւնը տեսական կերպով ամրապնդել, Բ. Օգնել ազգատիկ մանկանց՝ նոյն վարժարանին սփռած ազգագուտ դաստիարակութեան օգուտ փաղելու, գանձի նոյն գիշերօթիկ վարժարանին մէջ կրթելով<sup>22</sup>»:

<sup>18</sup> Արեւելք, 1884, Թ. 217:  
<sup>19</sup> Անդ:  
<sup>20</sup> Կանոնագիր Ընկերութեան նախկին աշակերտաց վարժարանի Հարց Միթիթարեանց Վիեննայի կատարողինուպոլիս, Վիեննա 1888, էջ 3:  
<sup>21</sup> Անդ՝ էջ 5:  
<sup>22</sup> Անդ:



բաժիններուն մէջ եօթը աշակերտի ուսում կը ջամբէ՝ անոնց բոլորին գրեթեական պիտոյքն ալ ինքը հոգարով, անոնցմէ հինգին ցերեկուան ճաշը տարով, հազուսան ու յարակից ծախքերն ալ ստանձնելով: Ասկէ զատ Միւթիւնը իր հիմնարկութենէն սկսած ամսական 40 ոսկիի յատկացում կ'ընէ 2 խոստումնալից համարարանականներու՝ բարձրագոյն ուսման համար: 1947ի սկիզբը Միւթիւնը կարեւոր դումար մը կը յատկացնէ թուրք նախակրթարանի մը երկու աշակերտներու: 1947ին կը հիմնէ «ուսանողաց ֆոնդ» մը՝ գտնելով մեծ համակրութիւն:

Ահա Միւթեան լոկ «Ընկերային Օթանդակութեան» Յանձնարարութիւնը գործունէութեան ասպարէզի չորս ճիւղերէն միայն մէկուն մէջ ունեցած արդիւնքը, այն ալ լոկ երկու տարուան ընթացքին: Միւթարեան Սանուց գործունէութեան մասին լրիւ դատարար մը կազմել փափաքողին կը յանձնարարենք կարգալ Միւթեան «Ամսօրեայ Հանդէս» Սանի յատկապէս ստաջին տարիին՝ առաջին և երկրորդ թիւերը: Հոն կը գտնէ ընթերցողը նաև Միւթեան շէնքի<sup>28</sup> և հիմնադիրներու<sup>29</sup> նկարները:

Միւթեան տեղեկատու թերթը՝ «Սան» 1948 Փետրուարէն սկսած ամսէ ամիս կանոնադրապէս լոյս կը տեսնէ՝ յաճախ պատկերազարդ և մերթ զարգարուն խնամուած յօդուածներով ու ուսումնասիրութիւններով:

Միւթիւնը լոյս հանած է նաև փոքրիկ շարք մը հատորիկներու, ինչպէս՝ Յորեկար Հ. Հմայեակ Ծ. Վրդ. Համարեան (կենսագրական), Միպիլ (Բանախօսութիւն Տիկ), Հոյգանոյշ Մատթի և այլն:

Միւթիւնը կը շարունակէ իր Մշակութային աշխոյժ գործունէութիւնը՝ հանդիսանալով տիպար Մշակութային Ընկերութիւն մը՝ քաղաքակրթ երկիրներու չափանիշով: Իրեն կը մաղթենք, իր անունին համեմատ, մնայուն ու յարատև «Միւթիւն»:

ՏՕԼԱՊՏԷՐԷ (Բերա)

- 1. ԽՆԱՄԱԿԱԼԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)
- Բերայի մեծ հրդեհին (1870) պատճառաբերայի հայ բնակչութեան մէկ մասը ապաստանած էր կից թաղին՝ Տօլապտէրէ մէջ, ուր կազմուած էին փոքրիկ զարոյցներ ալ: Այդ զարոյցներէն մին էր նաև «Հայկական երկսեռ» անունով զարոյցը: Արդ, այդ զարոյցին նիւթապէս ստատարելու համար 1872 Ապրիլի սկիզբը թաղին 7 ուսումնասէր անձեր «Խնամակալ Ընկերութիւն» կը հաստատեն՝ ընտրելով իրենց մէջէն Ատենապետ, Ատենադպիր և Գանձապետ: Ընկերութեան Ատենադպիրը՝ Յարութիւն Գարեան, 1872 Ապրիլ 6 թուով նամակ մ'ուղղելով Պոլսոյ Մասիսին՝ կը բացատրէ թէ ինչ ձևով Ընկերութիւնը պիտի կարենայ նպաստել յիշեալ զարոյցին: Գարեան կը գրէ. «Սոյն Ընկերութեան յիշեալ վաժարանին բարեկարգութեան նկատմամբ կատարելիք պաշտօնն է. Ա. Արդէն վարժարանին համար յատկացած և անօրէնէն զատ խնամակալաց ստորագրութեամբ վաւերացած տոմսակներով ազգասէր անձանցմէ զրամ հաւաքել: Բ. Հաւաքուած հասոյթը զարոյցական ո՛ր թերութեան գործածուիլը լրագրաց միջոցաւ հեղհեղ հրատարակել: Գ. Նուիրատուաց չնորհած նուէրները զարձեալ լրագրաց միջոցաւ յանձնել յանուանէ յայտ առնել» (Մասիս, 1872, թ. 1224):

Ընկերութեան անունը, զոր Այգոյաճեանի ցանկին մէջ չենք գտներ, Մասիսի նամակագիրը «Խնամակալ Ընկերութիւն» կոչելէ յետոյ իր ստորագրութեան մէջ կը գրէ «Ի դիմաց... Խնամակալաց Ընկերութեան» (Մասիս, անդ):

Ընկերութեան անունը, զոր Այգոյաճեանի ցանկին մէջ չենք գտներ, Մասիսի նամակագիրը «Խնամակալ Ընկերութիւն» կոչելէ յետոյ իր ստորագրութեան մէջ կը գրէ «Ի դիմաց... Խնամակալաց Ընկերութեան» (Մասիս, անդ):

- 2. ԱՐՇԱԿՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1872)
- Ընկերութեան մասին կը գրէ Հանէսեան<sup>30</sup>. «1872 Սեպտեմբեր 16ին կը կազմուի Արշակունեան Ընկերութիւնը Տօլապտէրէ մէջ, ուր Բերայի մեծ կրակէն յետոյ բնակչութիւնը շտապած էր: Արշակունեան Ընկերութեան նպատակն էր նոյն քաղի մէջ վարժարանի մը հաստատումը և մատուցի մը կառուցումը: Թաղական Խորհուրդը կը հովանաւորէ այս Ընկերութիւնը և զիմում կ'ընէ Պատրիարքարան որ հանգանակութիւն կատարելու համար ժապաւինեալ տոմար մը կը յանձնէ Ընկերութեան Գանձապետ Յակոբ Աճառեանի»:

<sup>30</sup> Մարտ. Հանէսեան, Հարիւրբոսնէ հինգամեայ Յօրեկան, անդ՝ էջ 123-124: — Հմմտ. Մասիս, 1873 թ. 1365:

Ընկերութեան Ատենապետը՝ Ստեփան Ռուս օլլու՝ 1873 Մարտ 20ին կ'իմացնէ թէ Ընկերութիւնը Մարտ 25ին «կը փութայ զարոյցին հիմնարկութիւնը ընել» (Մասիս, 1873, թ. 1365):

Չենք գիտեր թէ Ընկերութիւնը կը շարունակէ իր ուժերով կանգնել զարոյցի շէնքը: Հանէսեան այս կէտը կը լուսարանէ մասամբ, գրելով թէ Ընկերութիւնը իր հաւաքած զրամով 500 կանգուն գետին մը կը դնէ, իսկ Սարգիս Պէյ Պալեանի նուիրած 150 ոսկիով ալ գնուած գետինն յարակից երկու փայտաշէն շէնքեր կը գնուին, 1875ին: Ընկերութեան խնդրանքով Թաղական Խորհուրդը նոյն շէնքերը միացնելով՝ զարոյցի կը վերածէ և կը սարքաւորէ, որով 1875 Օգոստոս 10ին զարոյցի բացումը կը կատարուի Պատրիարքի, Սարգիս Պէյի և պաշտօնական անձերու ներկայութեամբ: Այս վարժարանը Ընկերութեան անունով «Արշակունեան» կը կոչուի, բայց նոյն Ընկերութեան բաղձանքով կը գրուի Թաղական Խորհուրդի երաւասութեան տակ (Հանէսեան, անդ՝ էջ 124):

Արշակունեան Ընկերութեան գործօն անդամներն եղած են. Յակոբ Աճառեան, Ստեփան Գալֆա, Խաչիկ Պալապուրեան, Խաչիկ Գալֆա, Տիմիրճի Յակոբ, Տէմիրճի Յովհաննէս<sup>31</sup>:

ՇԻՇԼԻ (Բերա)

- 1. ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ (1909)
- Շիշլի մէջ կազմուած Հայ Տիկնաց Միութիւնը կը յիշէ Թէոդիկ<sup>32</sup>, պատմելով Միութեան ձեռնառութեամբ ամուսնութիւնը հայ որբուհիի մը:

Միութիւնը կազմուած է 1909 Մայիս 1ին, ինչպէս կը տեսնուի իր «Հիմնական Կանոնադրութեան», տպուած Պոլիս, ուր կը կարդանք. «Հայ Տիկնաց Միութիւնը՝ որ կազմուած է Կիլիկիոյ աղէտին վաղորդակազմութեան և Կիլիկիոյ նիւն՝ արկածեալներուն օգնելու նպատակով, որոշած է տեսական հանգամանք մը տալ իր գործունէութեան և նպատակ ընտրած է. Ա. Պոլսոյ մէջ Արեւստանց-Որբանոց պահելով՝ պաշտպանել սոսկապէս գաւառացի չափահաս որբուհիները և սովորեցնել:

<sup>31</sup> Հանէսեան, անդ՝ էջ 139-140: — Հմմտ. Թորգոմեան, անդ՝ Բ., էջ 647-648:  
<sup>32</sup> Ամէնուն Տարեցոյցը, 1911, էջ 407:

նել անոնց ձեռարուեստի գանազան ճիւղեր, որպէս զի կարեան ապագային պատուաւորապէս ապրիլ իրենց ձեռքի աշխատութեան արդիւնքով (Պոլսեցի աղքատ աղջիկներ ալ կ'ընդունուին արհեստանոցին մէջ՝ ցերեկայ ըլլալու պայմանով): Բ. Օգնել սոսկապէս գաւառներու կարօտ ժողովուրդին՝ հանդերձեղէն, անկողին, սննդեղէն, գրեթեական պիտոյք, և այլն զրկելով<sup>33</sup>:

Միութեան Կանոնադրութեան անդամ, որոնց համեմատ Ընկերութեան անդամալճարն է ամսական 1 դահեկան: Միութիւնը ունի Հիմնադիր ժողով և Տնօրէն Խորհուրդ. առաջինին կը մասնակցին բոլոր անդամները, իսկ երկրորդը՝ կազմուած 11 հոգիէ՝ կ'ընտրուի Հիմնադիր ժողովէն և կը տեսէ 2 տարի:

Միութիւնը իր գոյութիւնը ապահովելու համար ունեցած հասոյթին 10% պաշտու հատկացնէ՝ զնելով զբամասուն մը կամ պատուաւոր հաստատութեան մը մէջ:

- 2. ՀԱՅ ԵՐԿՍԵՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1911 ?)
- Շիշլի Հայ Երկսեռ Միութեան մասին միայն յիշատակութեան մը հանդիպած ենք<sup>34</sup>: Երկտասարդական և մարզական Ընկերութիւն մը կը թուի ըլլալ:

- 3. ԿԱՐՕՏ ԸՆՏԱՆԵԱՆ ՊԱՇՏՊԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1914)

Շիշլի-Ֆէրիկիւղի մէջ, 1914ին կազմուած է Միութիւնս՝ չբաւորներու զրամական օգնութիւն ընելու համար (Ժամանակ, 1914, թ. 1995):

- 4. «ԽԱՆԿԻՐԱՅ» ՀԱՅ ԱՐԱԳՐԵԱԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՈՒԹԻՒՆ (1918)

Ընկերութեան նպատակն էր. Տարագրութեան վերադարձողներուն աշխատանք կամ գործիք ու նիւթ հայթայթել (Ժամանակ, 1918, թ. 3366):

(Շարունակելի): 2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

<sup>33</sup> Հիմնական Կանոնադրութեան Հայ Տիկնաց Միութեան, Կ. Պ. 1909 (?), էջ 3:  
<sup>34</sup> Տէ՛ս Մարմնամարզ, Կ. Պ. 1911, էջ 89: